

ԸՆՏԱՆԻՔԻ ԲԱՐՈՅԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

FAMILY ETHICS

Կիրառական բարոյագիտութեան ոլորտէն ներս, ինչպէ՞ս կը բացատրուի **ընտանիքի բարոյագիտութիւնը** եւ որո՞նք են անոր գլխաւոր հարցերը:

Նախքան տուեալ հարցերուն պատասխանելը, հարկ է բացատրել, թէ ի՞նչ կը նշանակէ **ընտանիք** հասկացութիւնը, ինչպէ՞ս կազմուած է եւ պատմութեան ընթացքին ի՞նչ փոփոխութիւններ կրած:

Հայերէնի մէջ **ընտանիք** հասկացութիւնը կազմուած է «ընդ» նախածանցի եւ «տուն» արմատի միացումով, որմէ՝ ընտանի, ընտանեկան, ընտանեզուրկ, եւայլն...: **Ընտանիք** եզրը բազմիմաստ է եւ կը նշանակէ.-

1. Մէկ տան մէջ ապրող ծնողներ եւ զաւակներ ...
2. Տոհմ կամ գերդաստան (արեւակցական կապով) ...
3. Գիտական խմբաւորում լեզուներու, ինչպէս՝ սեմական լեզուներու ...
4. Գիտական խմբաւորում կենդանիներու, ինչպէս՝ կաթնասուններու ...
5. Գիտական խմբաւորում բոյսերու, ինչպէս՝ շուշանածաղիկներու ...
6. Նոյն գործունեութեան տէր մարդոց խմբաւորում, ինչպէս՝ արուեստագէտներ, գրողներ, եւայլն...:

Յունարէնի մէջ, **ընտանիք** եզրի հոմանիշն է „Oikogéneia“ եզրը, ուր եւս „Oíkos“ արմատը կը նշանակէ «տուն» կամ «տնային ընկերակցութիւն»:

Եւրոպական կարգ մը լեզուներու մէջ, **ընտանիք**⁽¹²⁵⁾ եզրի հոմանիշը կը սերի լատիներէն „familia“ եզրէն, որ հնադարեան շրջանին կը նշանակէր տնային տնտեսութեան շրջանակի մէջ, տիրակալի հովանիին տակ ապրող «ծառաներու ամբողջութիւնը», Famulus = ծառայ եզրէն: „Familia“ եզրը իր այս իմաստը պահեց նաեւ մինչեւ Միջնադարու վերջերը եւ 17-րդ դարուն միայն ստացաւ այսօրուան («մէկ տան մէջ ապրող ծնողներ եւ զաւակներ») իմաստը, որ նաեւ այս յօդուածի քննարկման առարկան է:

Փիլիսոփայութեան եւ բարոյագիտութեան կողքին, «**ընտանիք**» հասկացութիւնը քննարկութեան նիւթ է աստուածաբանութեան, ընկերաբանութեան (Sociology), քաղաքականութեան, իրաւաբանութեան, հոգեբանութեան եւ կարգ մը այլ գիտաճիւղերու մէջ:

Պատմութեան ընթացքին, առաջին ընտանիքներու խմբակները ենթակայ եղած են մօր իշխանութեան (Matriarchism): Հոս, կիներ (մայրը) կը նկատուէր

(125) **Ընտանիք** = լատ.՝ familia, անգլ.՝ family, ֆրնս.՝ famille, իտալ.՝ famiglia, գերմ.՝ Familie, եւայլն...